



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

**ՀՀ Լոռու մարզպետ**

**Անդրեյ Ղուկասյանին**

**Հարգելի պարոն Ղուկասյան,**

Սույն թվականի հունիսի 24-ին Պրոֆեսիոնալ Զբոսավարների Հայկական ասոցիացիան, իր ֆեյսբուքյան էջթում մտահոգությունն է հայտնում ՀՀ Լոռվա մարզի, Ստեփանավան քաղաքի՝ Լոռի Բերդ պատմամշակութային հուշարձանից ոչ հեռու գտնվող հսկայական աղբավայրի մասին: Հայտարարությունում մասնավորապես ասված է.«Դեպի Ձորագետի կիրճ ձգվող հսկայական աղբավայրը ոչ միայն խաթարում է տեղանքի բնապատկերը, այլև հսկայական վնաս հասցնում շրջակա միջավայրին»: Աղբավայրից մշտապես բարձրացող տհաճ ծուխը տարածվում է շրջակա բնակավայրերի ու կիրճի վրա:

Աղբավայրի չափերը տեսանելի են անգամ արբանյակային նկարից: (Google քարտեզով որոնման համար տարածքի տեղորոշման կոդերը՝ 41.005800, 44.415062)”:

Հայտարարության հղումը և նկարները այստեղ՝ ([https://www.facebook.com/ArmenianAssociationOfProfessionalTouristGuides/posts/2351048324934344?\\_\\_tn\\_\\_=-R](https://www.facebook.com/ArmenianAssociationOfProfessionalTouristGuides/posts/2351048324934344?__tn__=-R))

Խնդրում եմ ասել արդյոք աղբավայրը օրինական է, արդյոք ունի թույլտվություն, Լոռու մարզպետարանի կողմից ի՞նչ գործողություններ են իրականացվում խնդրի լուծման ուղղությամբ և առհասարակ Լոռու մարզպետարանը ի՞նչ դիրքորոշում ունի այս հարցի վերաբերյալ :

**Հարգանքով՝**

**«Լուսավոր Հայաստան» խմբակցության  
պատգամավոր Արմեն Եղիազարյանին**